ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է իր կարիքների համար ՀՀ Շիրակի մարզի գ. Բերդաշենի միջնակարգ դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման մնացորդային աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված N ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-25/15 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 17.09.2025թ. կնքված N ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-25/15 գնման պայմանագրում 03.02.2026թ. կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ	ՀՀ կառավարության 25.12.2025թ. N 1910-Ն որոշում:
Փոփոխության նկարագրություն	Ֆինանսական միջոցների հատկացում:
Փոփոխության հիմնավորում	Պայմանագրի 8.5 և 8.16 կետեր:

Պատվիրատու՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտե

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 3

17.09.2025թ. կնքված N ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-25/15 գնման պայմանագրի

ք. Երևան 03.02.2026թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Գ. Եղիազարյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «ՇԻՆ» ՍՊԸ-ն (Գործընկեր-1) ի դեմս տնօրեն Ա. Խաչատրյանի և «Գառնի Շին» ՍՊԸ-ն (Գործընկեր-2) ի դեմս տնօրեն Վ. Մարությանի (այսուհետ երկուսը միասին՝ Կապալառու), որոնք գործում են ընկերությունների կանոնադրությունների և միմյանց միջև 28.05.2025թ. կնքված համատեղ գործունեության պայմանագրի հիման վրա, մյուս կողմից, (երկուսը միասին այսուհետ՝ Կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 25.12.2025թ. N 1910-Ն որոշումը և **ՀՀ Շիրակի մարզի գ. Բերդաշենի միջնակարգ դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման մնացորդային աշխատանքների** իրականացման համար Կողմերի միջև 17.09.2025թ. կնքված N ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-25/15 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.16 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին՝

1.1.1 Պայմանագրի 5.1.1 կետի առաջին պարբերությունը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«Պայմանագրի գնից՝ մինչև 187 138 224 (մեկ հարյուր ութսունյոթ միլիոն մեկ հարյուր երեսունութ հազար երկու հարյուր քսանչորս) ՀՀ դրամի չափով, Պատվիրատուն կարող է փոխանցել Կապալառուի բանկային հաշվին՝ որպես կանխավճար՝ բանկային երաշխիքի առկայության դեպքում: »:

1.1.2 Հաստատել Պայմանագրի 2026 թվականի վճարման (ֆինանսական պարտավորությունների կատարման) ժամանակացույցը՝ համաձայն Համաձայնագրի հավելվածի:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում Կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված

իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը բաղկացած է երկու էջից, Համաձայնագրի հավելվածը բաղկացած է մեկ էջից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի հավելվածը համարվում է Համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011048361
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝

(ստորագրություն) Գ. Եղիազարյան

Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ՝

Գործընկեր-1

«ՇԻՆ» ՍՊԸ
ք. Երևան, Եկմալյան փ., 2-6/55
«ՀԱՅԷԿՈՆՈՆԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/Հ 163003978646
ՀՎՀՀ 02630537

Տնօրեն՝

(ստորագրություն) Ա.Բաղչատրյան

Կ.Տ.

Գործընկեր-2

«ԳԱՌՆԻ ՇԻՆ» ՍՊԸ
Իրավ. հասցե՝ Կոտայքի մարզ, գ. Գառնի,
Վ.Համբարձումյան 29 տ.
Գործ. հասցե՝ ք. Երևան, Ավան, Թումանյան թ. 46/2
«Ինեկորբանկ» ՓԲԸ
Հ/Հ 20508220798110 01
ՀՎՀՀ 03554021

Տնօրեն՝

(ստորագրություն) Վ. Մարության

Կ.Տ.

Հավելված
17.09.2025թ. կնքված
N ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-25/15 գնման պայմանագրի
03.02. 2026թ. կնքված N 3 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Մինչև 2025թ. վճարված գումար	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում											
				հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	**Ընդամենը**
1	45211231/2	ՀՀ Շիրակի մարզի գ. Բերդաշենի միջնակարգ դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման մնացորդային աշխատանքներ	140 659 877		62 608 800	62 608 800	146 087 100	146 087 100	146 087 100	208 695 900	208 695 900	208 695 900	208 695 900	208 695 900	208 695 900	**208 695 900**

**Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011048361
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝

(ստորագրություն) Գ. Երիցազարյան

Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ՝

Գործընկեր-1
«ՇԻՆ» ՍՊԸ
ք. Երևան, Եկմալյան փ., շ. 6/55
«ՀԱՅԷԿՈՆՈՆԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/Հ 163003978646
ՀՎՀՀ 02630537

Տնօրեն՝

(ստորագրություն) Ա. Խաչատրյան

Կ.Տ

Գործընկեր-2
«ԳԱՌՆԻ ՇԻՆ» ՍՊԸ
Իրավ. հասցե՝ Կոտայքի մարզ, գ. Գառնի, Վ. Համբարձումյան 29տ.
Գործ. հասցե՝ ք. Երևան, Ավան, Թումանյան թ. 46/2
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2050822079811001
ՀՎՀՀ 03554021

Տնօրեն՝

(ստորագրություն) Վ. Մարության

Կ.Տ